Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի
31 հոկտեմբերի 2018 թվականի թիվ 166 Ա որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին մրցույթի հայտարարության տեքստ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածի ներկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը,
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ,
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթը կկայանա 2018 թվականի նոյեմբերի 23-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմ հետևյալ հասցեով Վայոց ձորի մարզ, գ. Թառաթումբ, վարչական ղեկավարի նստավայր, հեռ.՝ 094-82-22-84:

Դիմումների տրման վերջնաժամկետն է՝ 16/11/2018թ.

Դիմող քաղաքացիները Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն ՝

ա/դիմում համայնքապետարանի աշխատակազմի անունով /դիմումի ձևը ազատ է/,

բ/խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/մեկ լուսանկար՝ 3Х4 սմ չափի,

դ/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: